



- Մավզուի դամբարանը
- Զևսի արձանը
- Արտեմիդայի տաճարը

Կամսար ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՄԱՎԶՈՒԻ ԴԱՄԲԱՐԱՆԸ

Կարիայի թագավոր Մավզուի դամբարանը կերտվել է Հալիկաոնասում: Այս ֆաղափր գտնվում էր Փոֆր Ասիա թերակղզու հարավ արևմտյան մասում*, էգեյան ծովի ափին, ներկայիս Իզմիր նավահանգստից հարավ: Նրա տեղում այժմ գտնվում է բուրժական Բույրուն անունը կրող բնակավայրը:

Հալիկաոնասը եղել է հելլենական կենտրոններից մեկը: Իր ժամանակին եղել է նաև առևտրական կարևոր նավահանգիստ:

Հալիկաոնաս ֆաղափի անունը կապված է «յոթ հրաշալիքներից» մեկի՝ Մավզու թագավորի դամբարանի հետ: Բայց անտիկ աշխարհում այս ֆաղափր հայտնի էր նաև հունական պատերազմի աստծո՝ Արեսի տաճարով, ինչպես նաև, որպես հույն նշանավոր պատ-

մարան, աշխարհագրագետ Հերոդոտի (V դար մ. թ. ա.) ծննդավայր:

Հալիկաոնասը մայրաքաղաք դարձավ Մավզու թագավորի օրոք և հենց այդ ժամանակ էլ հասավ իր ծաղկմանը: Հատկապես բարձր զարգացման հասավ նարտարապետությունը, որի ամենավաղ վկայությունը Մավզուի հույակապ դամբարանն է: Այն կառուցվել է թագավորի կիներ՝ Արտեմիդան, 4-րդ դարում մեր թվարկությունից առաջ: Սերունդներն այն դիտել են որպես խորհրդանիշ՝ մեծ սիրո և անսփոփ վշտի:

Այս տեսակետից նա մեզ հիշեցնում է Ագրայի Թաշ Մահալը, որը կառուցվեց Շահ Զահանը իր կնոջ՝ Մումթազ Մահալի համար՝ որպես դամբարան: Սա արդեն համարվում է ուրբերոդ հրաշալիք*:

Սկիզբը՝ այս տարվա 2-րդ և 3-րդ համարներում:


* Փոֆր Ասիայի արևմտյան ափերը ժամանակի ընթացքում ներգրավվեցին հունական կուլտուրայի մեջ և հայտնի դարձան Հոնիա անվան տակ: Մոտ ութսուն կիլոմետր երկարությամբ անեցին թվով տասներկու ֆաղափներ. որոնք դարձան հոնիական աշխարհի կուլտուրական կենտրոնները: Դրանց թվում առավել երևելիները եղան Հալիկաոնասը և Նիքսոսը:

* «Ուրբերոդ հրաշալիք» արտահայտությունը պայմանական է. այն օգտագործվում է որպես չափանիշ՝ պատմական հուշարձանների մեծությունը, վեհությունը և արտասովոր զեղեցկությունը բնորոշելու համար:

Ուրբերոդ հրաշալիք են համարում և՛ Չինական Մեծ պարիսպը, և՛ Հռոմի կոլիզեյը, և՛ Պիզայի թեֆ աշտարակը, և՛ Թաշ Մահալն ու այլ գործեր:

Մավզուլի դամբարանի կառուցման համար հրավիրվեցին հելլենական երե-վելի նարտարապետներ Պիֆեցն ու Սատիրը և ֆանդակագործներ Սկոպասն ու Լեոխարդը, որոնք ստեղծեցին հի-րավի անկրկնելի մի գործ: Դամբարանն իրենից ներկայացնում էր մի ուղղան-կյուն բարձր շինություն, որն ուներ 77 մետր երկարություն, 66 մետր լայնու-թյուն և 50 մետր բարձրություն: Այն բաղկացած էր երկու հարկից, շնաշ-ված վերևի կվադրիգան (ֆառածի մարտակառ): Առաջին հարկը արֆա-յական հանգստարանն էր: Այն կա-ռուցված էր Հոռոդոսից ու Հունաստանից բերված սպիտակ մարմարից և զար-դարված էր ճոնիական եզրագարդով (ֆրիզով): Երկրորդ հարկը սյունազարդ ու գեղաֆանդակ մի դահլիճ էր, որը նախատեսված էր զոհաբերությունների համար: Շենքը ամբողջացնում էր մի բրգածև տանիք, որի գագաթին դրված էին Մավզուլ քաղալորի և Արտեմիդա քաղալու չորս մետրանոց արձանները՝ առջևում կառքին լծված չորս ձիեր՝ հունական նշանավոր աստվածների ուղեկցությամբ:

Դամբարանը գտնվում էր Հալիկառ-նասի կենտրոնում և համարվում էր ֆաղափի զարդը: Սակայն հագիվ էր ա-վարտվել այս հրաշալիքի կառուցումը, երբ Ալեքսանդր Մակեդոնացու բանա-կը ներխուժեց Հալիկառնաս: Նա հե-տապնդում էր պարսից գործին: Այս երկու աշխարհակալ պետությունների զորքերի ընդհարման ժամանակ ֆա-ղափը մեծ վնասներ կրեց, կոդոպտվեց Մավզուլի դամբարանը: Ավելի ուշ դամ-բարանին մեծ վնասներ հասցրին նաև իսաչակիրները՝ համարելով այն կոա-պաշտական սրբավայր: Չնայած այդ բոլորին Հին Աշխարհի փառաբանված հրաշալիքը կանգուն մնաց մինչև տասներկնգերոդ դարը, երբ քուրքերը



Մավզուլի դամբարանը

մեկը մյուսի ետեից նվաճելով Փոքր Ասիայի ֆաղափները հասան էգեյան ծովի ափերն ու մտան Հալիկառնաս: Նրանք էլ վերջին կործանիչ հարվածը հասցրեցին դամբարանին. ավերեցին այն ու ֆաբերից մի բերդ կառուցեցին, որն անվանեցին Բուդրուն:

Ժամանակի ընթացքում Մավզուլի դամբարանով սկսեցին հետաքրքրվել հնագետներն ու պատմաբանները, հատկապես Լոնդոնի Բրիտանական քանդարանի գիտնական Չ. Նյուտոնը: Անգլիացի հնագետին շատ բանով օգ-նեցին Պլինիոս Ավագի քողած նկա-րագրությունները, որոնք լավ պատկե-րացում էին տալիս այդ նշանավոր կառուցվածքի մասին: Չ. Նյուտոնը անգլիական դեսպանի միջոցով, մեծ զժվարությամբ կարողացավ Բուդրու-նի բերդի պատերից հանել դամբարա-նի մասերը, այդ քվում առանձին ֆան-դակներ և սյուներ, ինչպես նաև Մավ-զուլ քաղալորի արձանը: Այդ բոլորը տեղափոխվեց Բրիտանական քանդա-րան: Հետագայում մնացած մասերով կարողացան վերականգնել Մավզուլի

դամբարանի մակերեսը: Գիտնականները նշտեցին նաև դամբարանի տեղը:

Ճարտարապետական այս գլուխգործոցը ուշագրավ է նաև նրանով, որ հետազայում շատ ժողովուրդներ նարտարապետական մեծարժեք դամբարաններն սկսեցին մավզուլէյ անվանել:

Մավզուլէյ բառն առաջին անգամ գործածել են հռոմեացիները՝ Օգոստոս և Ադրիան կայսրերի համար Հռոմում կառուցված դամբարանների կապակցութայամբ:


ԶԵՎՍԻ ԱՐՁԱՆԸ

Հին ժողովուրդների. այդ թվում և հին հույների արվեստն ու գրականութայունը սերտորեն կապված էր դիցաբանական կերպարների հետ: Եվ բնական է, որ «յոթ հրաշալիքներին» պատկանող կոթողները նվիրված են ոչ միայն այս կամ այն փարավոնին կամ քաղաքին, ինչպես ասենք Քեոփսի բուրգը, Մավզուլի դամբարանը, այլև դիցաբանական կերպարներին՝ Զևսին, Հելիոս աստծուն և Արտեմիդա դիցուհուն:

Զևս հույների գերագույն աստվածն էր, Ոլիմպիոսի աստվածների հայրը: Պարզ է, որ բոլոր աստվածներից առավել մեծարման արժանանում էր Զևսը: Ի պատիվ նրան շատ տաճարներ ու արձաններ են կերտվել, բայց այդ բոլորի մեջ ամենահռոյակապը հին հունական ֆանդակագործ Ֆիդիասի* կերտած արձանն է, որ կանգնեցվել է Զևսի պատվին կառուցված տաճարում,

* Ֆիդիասն ապրել ու գործել է հունական արվեստի ծաղկման ժամանակաշրջանում՝ այսպես ասած «Պերիկլոսի ոսկե դարում»: Աթենքի առաջնորդը՝ Պերիկլոսը, հովանավորում էր նարտարապետությունն ու ֆանդակագործությունը: Նրա օրոք կառուցվեց Պարթենոնը, որի զարգացման գործում մեծ դեր խաղաց Ֆիդիասը:

մեզանից մոտ 2400 տարի առաջ: Այն ֆանդակագործի գլուխգործոցն էր և մեծ համբավ ուներ Հին Հունաստանում: Արձանը գտնվում էր Ոլիմպիոս ֆաղաֆում, իսկ վերջինս էլ տեղադրված էր Պելեպոնես քերակղզու վրա՝ Ալֆեյա գետի ափին:



Զևսի արձանը

Ֆիդիասն արձանի ստեղծման համար հիմք է ընդունել այն կերպարը, որ տվել է Հոմերոսն Իլիականում: Արձանը պատկերել է Զևսին՝ գահին բազմած, գլխին՝ դափնեպսակ, ուսին պատմունան, ձախ ձեռքին՝ գայիսոն, որի վրա նստած էր արծիվը, իսկ աջ ձեռքում գունդ, որի վրա կանգնած էր քեափոր արձանիկը՝ հաղթանակի սիմվոլը: Արձանը, որի բարձրությունը 20 մետր էր, ֆանդակված էր փղոսկրից, գահը, զարդարանքը և գավազանը՝ ոսկուց:

Ավանդությունը պատմում է, որ

Ֆիդիասը այնքան ոգեշնչված է եղել իր գործով, որ ավարտելուն պես դիմել է Ջևսին. «Ո՛վ Ջևս, գո՛հ ես»: Այդ պահին, տաճարի խորքից իբր լսվել է Ջևսի պատասխանը. «Այո, գոհ եմ»:

Ամբողջ հունական աշխարհը հիացած էր Ֆիդիասի ստեղծած Ջևսով, և ամեն մի հույն երազում էր գեթ մի անգամ տեսնել այն:

Ժամանակակիցների վկայությամբ արձանին նայողները շէին հագեցնում: Բոլոր ականատեսները միաձայն կրկրնում էին, որ այն վեր է այն բոլորից ինչ երբևէ նրանք տեսել են:

Ահա քե ինչպես են իրենց հիացմունքն արտահայտել ժամանակակիցները. «Օ՛, Ֆիդիաս, աստված ինքն է իջել քեզ մոտ երկրի վրա, եթե ոչ, ապա դու ես նրա մոտ երկինք բարձրացել»:

«Ինձ քվում է, որ մարդ, որի հոգին մոայլ է, որն իր կյանքում խմել է դառնություն, քախժի բաժակը մինչև հատակը, որի վրայով երազի պես է անցնում ամեն ինչ, նայելով այս արձանին մոռանում է իրեն բաժին ընկած բոլոր ձախորդություններն ու կյանքի հարվածները»:

Սակայն այս հրաշալիքը նույնպես չպահպանվեց: Կործանվեց մ. թ. V դարում՝ երկրաշարժից: Արձանի միակ պատկերը մնացել է հունական բրոնզյա և պղնձյա դրամների վրա:

Ֆիդիասի ֆանդակած Ջևսը նախատիպ դարձավ հետագա ֆանդակների համար: Նոր ժամանակներում կատարված պեղումների շնորհիվ հայտնաբերված նյութերի հիման վրա հնարավոր եղավ վերականգնել քե՛ տաճարի և քե՛ արձանի մակերևույթը:

ԱՐՏԵՄԻԴԱՅԻ ՏԱՃԱՐԸ

Այս հրաշալիքը գտնվում էր Հոնիայի Եփեսոս քաղաքում՝ Փոքր Ասիա քերակղզու արևմտյան մասում, ներկա-



Արտեմիդայի տաճարը

յիս Իզմիր նավահանգստից փոքր-ինչ հարավ:

Եփեսոսի աշխարհագրական դիրքը շատ բարենպաստ էր: Նա հարմար էլ էր դեպի էգեյան ծով Լիդիա և Ֆրիգիա նահանգների համար: Եփեսոսը նշանավոր վաճառաշահ ֆաղաֆ էր, ուր գալիս էին հեռավոր Փյունիկիայից, մոտակա Կարիայից և այլ տեղերից: Նա ազգերի և կուլտուրաների հանդիպման վայր էր, այնպիսին, ինչպիսին հետագայում դարձավ Ալեքսանդրիան:

Եփեսոսցիների հովանավորողը Արտեմիդա՝ աստվածուհին էր: Նա հա-

* Հույների մոտ՝ Արտեմիս: Եվրոպական շատ ժողովուրդների մոտ ժամանակի ընթացքում «իս» մասնիկը փոխարինվեց «իդա»-ով: Հայերենում գործածական են և՛ Արտեմիդան, և՛ Արտեմիսը:

մարվում էր Զևսի և Լետայի աղջիկը, Ապոլլոնի փայրը, առատության, բարության և լուսնի աստվածուհին, ինչպես նաև կանանց ողջախոհության հովանավորողը:

Եփեսոսցիներն էլ որոշում են իրենց պաշտելի աստվածուհու՝ Արտեմիդայի պատվին կառուցել այնպիսի մի տաճար, որն իր գեղեցկությամբ գերազանցեր մինչ այդ եղածներին: Տաճարի կառուցումը տևել է 120 տարի և ավարտվել է մեր թվարկությունից 450 տարի առաջ:

Պեղումները ցույց են տվել, որ այդ կառուցումը զբաղվել է 2400 ֆառակուսի մետր տարածություն: Տաճարի կենտրոնական մասում գտնվում էր Արտեմիդայի արձանը: Եփեսոս այցելողները վերադառնում և յշխարհով մեկ տարածում էին Արտեմիդայի վեհասփանշ տաճարի համբավը:

Ի դեպ, հնում տաճարները ծառայում էին որպես կուլտուրայի և գիտության կենտրոն, ինչպես նաև զանազան, ուր պահվում էին քանկարձեփ իրերն ու զանձերը, արձաններն ու նըշանավոր նկարիչների գործերը: Տաճարից բան հափշտակելը համարվում էր մեծագույն հանցագործություն: Այնպես որ Արտեմիդայի տաճարը ոչ միայն մեծ կոթող էր, այլև մեծ զանձարան:

Բայց մարդկային ստեղծագործու-

թյան այս կոթողը գոյություն ունեցավ ընդամենը հարյուր տարի: Երեքհարյուր հիսունվեց թվականի հուլիսի 21-ին մ. թ. ա. այրվեց այդ վեհասփանշ տաճարը: Ըստ ավանդության այրողը ոմն Հերոստրատ էր, որը ոչնչով հայտնի չէր և որոշեց մեծագույն հանցագործությամբ անմահացնել իր անունը:

Հերոստրատի արարքը մեծ զայրույթ առաջացրեց: Ամբողջ Հունաստանը նզովք էր կարդում շարագործին: Հույները որոշեցին ոչ մի տեղ և ոչ մի առիթով, նույնիսկ տաճարի հրդեհման պատմությունն անելիս, չհիշել Հերոստրատի անունը: Ու քեև արգելվեց հիշատակել Հերոստրատի անունը, բայց նախկին նա մնաց պատմության մեջ որպես մի ամորալի ու սև գործի նեղիմակ: Ներկայումս «հերոստրատյան փառք» արտահայտությունը գործածվում է եղկելի փառքի իմաստով, երբ մարդ ձգտում է փառքի հասնել հանցագործության միջոցով, նույնիսկ կործանելով կուլտուրական զանձերը:

Հետաքրքրական է, որ Արտեմիդայի տաճարի այրման գիշերը նշանավորվեց նաև մի այլ փաստով: Այդ գիշեր ծնվեց Ալեքսանդր Մակեդոնացին: Ըստ ավանդության հունական երկնակամարում մի աստղ է մարել Արտեմիդայի տաճարի այրումով և մի այլ աստղ երևացել Ալեքսանդր Մակեդոնացու ծրնունդով:

ԱՇԽԱՐՀԻ ՅՈԹ ՀՐԱՇԱԼԻՔՆԵՐԸ

1. Քեոփսի բուրգը, 2. Արտեմիդայի տաճարը, 3. Ալեքսանդրիայի փարոսը, 4. Զևսի արձանը, 5. Հռոդոսի արձանը, 6. Մավզոլի դամբարանը, 7. Շամիրամի կախված ալգիները:

